ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<09>> օգոստոսի 2024թ. N ՄՈ/390 -Ա

ք. Արմավիր

«ԽԱՆՋՅԱՆԻ ԱՐՄԵՆ ԲԵՆԻԱՄԻՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Աննա Հովսեփյանի 2024 թվականի օգոստոսի 9-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աննա Հովսեփյանին տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա երկարացված արձակուրդի մասը՝ 2024 թվականի օգոստոսի 12-ից 16-ը ներառյալ՝ 5 աշխատանքային օր տևողությամբ:
2. Աննա Հովսեփյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Հասմիկ Շաքրիկյանին:

3. «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Հասմիկ Շաքրիկյանի աշխատավարձի վճարումը 2024 թվականի օգոստոսի 12-ից 16-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Աննա Հովսեփյանի աշխատանքի մեջ համարել 2024 թվական օգոստոսի 19-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Խ[illegible] ՄԿՐՏՉՅԱՆ